

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԳԱՅ ԳԻՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ¹⁾

(վանից—Շէմզղինան)

Գիշերը անց է կենում շատ հանգիստ և ապահով։ Առաւօտեան վաղ մենք ճանապարհ ենք ընկնում, և բարձրանալով մի բլրակ անցնում ենք Չալլըրան կոչուած 80 տուն բնակիչ ունեցող քրդական գիւղի միջից, և նոյն բլրակի անտառապատ էջքը կատարելուց յետոյ՝ անց ենք կենում Զապ գետի բաւականին մեծ օժանդակ ջրից, հին, խարխլած մի փայտեայ կամրջի վրայով, որի տակից գետակը հոսում է յորդ ալիքներով մի սիրուն ձորակի միջով, ուր երկու ափերի վրայ աճնկուած ուռենի և այլ անտառային ծառերը տալիս են ձորակին հիանալի տեսք՝ գարնան հրապոյրներով առլցուած։

Անցնելով գետը մենք սկսում ենք անմիջապէս շոնակայ դարի (բլուր) դժուար վերելքը, որի գագաթին մօտ, մի հըսկայ խնձորենու տակ—որին շատ մերձ գտնւում է մի քրդական անյայտ սրբի, անյիշատակ ժամանակներից մնացած գերեզմանը, շրջապատուած՝ ջերմեւանդ մուսուլման անցորդներից մէկ-մէկ ձգուելուց կազմուած քարակոյտերով և ծառերի տերեւապատ ճղներով՝ առնում ենք մեր ցերեկուայ հանգիստը և լեռնային ճաշը կաղմուած պաքսիմատից և մերձակայ քրդական գիւղից բերած ոչխարի մածունից։

Բարձրանալով շոնակայ դարի ամենաբարձր գագաթը, մեր առաջ բացւում է մի ընդարձակ հորիզոն. հիւսիսից երևում են Բաշգալէի բլուրները, և Զուլի գագաթը. արևմտահարաւ տարածուած են Զուլամերիկի ամենի, անտառապատ բարձր լեռները, որոնց փէշերի վրայ և ստորոտներում ապրում են մեծաւ մասամբ կիսանկախ ասորիները հանգուցեալ Մարշիմոնի որդու՝ երիասարդ Բենիամինի հոգևոր և քաղաքական իշխանութեան ներքոյ. արևելքից պարսկաթուրք սահմանադլիսի

²⁾ Տես «Մուրճ» № 6.

ապառաժոտ լեռները. իսկ մեր առջև՝ հարաւակողմը՝ ձոնակայ դարի գառովայրի, ուղղահայեացի մօտեցող անհարթ թեքութիւնը, անդնդախոր ձորով, որի միջով անցնում է Զապի գըլ-խաւոր ճիւղերից Նհէլ գետը յորդ յորձանքներով և հոսում Զուլամերիկ գաւառի խիտ, անտառապատ և մանուածապատ ձորակների միջով:

Կատարելով ձոնակայ դարի դժուարիջանելի անհարթ վայր էջը, մենք անցնում ենք Նհէլ գետը՝ գերաններով և տերևախիտ ճիւղերով ծածկուած, շատ տեղ քայքայուած և բոպէ առ բոպէ քանդուելու վտանգ սպառնացող կամուրջի վրայից: Կամրջի չորս կողմը գետափերի վրայ սփռուած են, անկանոն կերպով տնկած, փարթամ ուռենիների շարքեր, որոնք իրանց կենսատու անունը ստանում են Նհէլի պարարտ ափերից: Ապա սկսում ենք Նհէլ գետի հոսանքն ի վեր բարձրանալ մի նեղ ձորակից, որի երկու կողմը բարձրանում են ապառաժոտ բլուրներ, և որոնց ստորոտները ծեծելով հոսում է Նհէլը օձաձև գալարումներով, արևելքից դէպի արևմուտք: Մեր ճանապարհը, Նհէլի աջ ափով ընթացող նեղ շաւիղը որը տեւում է 3 ժամից աւելի, բարձրադուր է և դժուարանցանելի:

Նհէլի ձորից դուրս գալու ժամանակ նրան շրջապատող ամենի լեռները տակաւ ցածանում են և մեր առաջ պարզւում է մի ընդարձակ, անհուն դաշտավայր Գէվէռու-դիւզ (տափարակ) կոչուած, դալարաւէտ և արօտատեղերով հարուստ, որ ոռոգւում է Նհէլի և իր օժանոտակների ջրով, ներկայացնելով նրա ընդարձակ, պարարտ ջրաբաշխը: Երկարութիւնն է 35—40 վերստ հիւսիսից հարաւ, իսկ լայնութիւնը՝ 30 վերստ արևելքից արևմուտք: Անսահման դաշտի վրայ, այս ու այն կողմ, միմեանց շատ մօտ, տարածուած են դաշտի գիւղերը սիրուն տեսարաններով և ծառադարդ, և մեծաւ մասամբ առօրի և քիւրդ բնակչութեամբ: Հայկական գիւղերը սակաւաթիւ են: Դաշտի հիւսիսային մասում աչքի է ընկնում Դաքընէլ հայաբնակ գիւղը, Նհէլի ափին, սիրուն դիրքով: Սրանից 6—7 տարի առաջ Գէվէռուի դաշտի ամենահարուստ գիւղն էր ներկայացնում. պարբերական հարստահարութիւններից և թալանից յետոյ, այժմ սակայն աղքատ է և նիւթական խեղճ կացութեան մատնուած. նոյն վիճակն ունեն և միւս հայ բնակիչ ունեցող գիւղերը:

Մտնելով Գէվէռու գիւղը, Նհէլի եղեգնաւոր ափից միայն 50 քայլ հեռաւորութեան վրայ, ինչպէս միւս գիւղերնեւեր, այս անգամ էլ ազատ երկնից բաց կապոյտ վրանի տակ առնում ենք մեր ճանապարհորդութեան հինգերորդ գիշերուայ

հանգիստը: Այժմ արդէն մեր քիւրդ ձիապանների մեծ մասի հայրենագաւառի սահմաններում ենք գտնւում, այնպէս որ իշ-
ներուց և հանգստանալուց շատ չանցած, նրանք սկսում են մէ-
կիկ-մէկիկ ցրուել շրջակայ իրանց (քրդական) գիւղերը, որի
համար էլ առաւօտեանը ստիպուած ենք լինում շատ ուշ ճա-
նապարհ ընկնել, յարմարութիւն ունենալով, Նհէլի հրաշալի
ջրից պատրաստած մեր առաւօտեան սովորական թէյը խմելու,
ինչ որ Վանից մեկնելուց ի վեր առաւօտները շտապ գուրս
գալու պատճառաւ խանգարուել էր:

Արևը բարձրացել էր արևելեան հորիզոնի վրայ և տա-
կաւ մօտենում էր իր զէնիթին, երբ մենք նրա ջերմացած ճա-
ռագայթների ներքոյ շարունակում ենք մեր ճանապարհը, ըն-
թանալով դաշտի արևելեան սահմանագծով, և 3—4 ժամից հասնում
ենք Գէվէն գաւառի գայմագամանիստ կենդրոն Գէվէնը, տա-
րածուած ընդարձակ, անհուն դաշտավայրի արևելեան մասում:

Գէվէն գիւղաքաղաքի բնակիչները հաշուում են մօտաւո-
րապէս 2,500 հոգի: Հայերը բնակչութեան մեծագոյն տոկոսն
են կազմում, լինելով մօտաւոր հաշուով 300 տուն. ունին մի
եկեղեցի հին և անշուք, մի տարրական նախակրթարան, կամ
աւելի ճիշտ խալիֆայանոց 40—50 աշակերտներով, մի շատ
ողորմելի շինութեան մէջ, խառն ի խուռն, գետնի վրայ տե-
ղաւորուած: Տեղական հայ ծխականները երկպառակուած են
քահանայական ինչ որ խնդրով. ժողովրդի մի մասը չէր ու-
զում ճանաչել Վանայ առաջնորդարանի կարգադրութեամբ նը-
շանակուած Տէր-Կարապետ քահանային, աշխատելով ընդհակա-
ռակն, ի նպաստ մի պատանու, որին մի համախօսականով,
ստորագրուած իր կողմնակիցների կողմից, կամենում էին քա-
հանայ ձեռնադրել տալ, փոխանակ Տէր-Կարապետի: Գէվէնը
ենթարկւում է Բաշգալէի առաջնորդարանի հոգեւոր իշխանու-
թեան, այնուամենայնիւ հեռուից հեռու ուղարկուած հրաման-
ները, այդ առաջնորդարանից, այսպիսի յետ ընկած անկիւ-
նում, որպիսին Գէվէնն է, բնականաբար մնում էին անգործա-
դրելի. և ժողովուրդը շարունակում էր իր երկպառակութիւնը,
մտքերը երկուստեք զրգուած, բաժանուած և անմիաբան՝ շա-
րունակւում էր տեղային յուզիչ քահանայական այդ ամուլ
խնդիրը...

Գէվէնի հայերը վերին աստիճանի աղքատ են և միաժա-
մանակ անապահով. այդ պատճառաւ է, որ ամեն տարի մեծ
խմբերով գաղթում են սահմանակից Պարսկաստանը, որը մի-

այն 6—7 ժամու ճանապարհով հեռու է Գէվէտից, և ապաստան և ապրուստ որոնում Պարսկաստանի հայաբնակ տեղերում՝ առաւելապէս Ուրմի, Սալմաստ, խոյ և այլն, որտեղերը բազմաթիւ գէվէտցիներ կան այժմ ընտանիքներով, տնով-տեղով գաղթած:

Գէվէտի առուտուրն ու արհեստները ընդհանրապէս հայերի ձեռքին է. արհեստաւորներից մեծ մասը վանեցի եկուորներ են, որոնք պարսկում են գլխաւորապէս դերձակութեամբ, կօշկակարութեամբ և երկաթագործութեամբ: Առուտուրը լինում է գլխաւորապէս պարսկական փողով (արծաթ երկու-ընդհանրոցներ), որ տաճկական փողի գործածութեան չափով ընթացիկ է այս սահմանագլխային տաճկական վայրերում:

Գէվէտում ման եկողի աչքին կրննան անմիջապէս ցած-լիկ, աղքատ տնակների կողքին բաւականին կոկիկ երկյարկանի շինութիւններ էլ ապակեայ պատուհաններով (տների մեծ մասի պատուհաններն թղթով են ծածկուած, որոնց թափանցիկ դարձնելու համար նախընտրում են կտաւատի ձէթով):

Գէվէտը լինելով համանուն գաւառի կենդրոնական գիւղաբաղաքը՝ ունի իր հիւքիւմէթ դայիրէսին (կառավարական պաշտօնատունը), մի զօրանոց (ղըշլայ), մի հարիւրեակ զինուորներու վաշտով, մի իւզբաշու (հարիւրապետ) հրամանատարութեան տակ, որ այս շրջանի սահմանագլխի ապահովութեան համար հսկելու պաշտօնն էլ ունի:


Գէվէտը ինչքան բուսականութիւնից հարուստ՝ այնքան էլ ծառերի կողմից աղքատ է և մերկ. միայն քաղաքի հիւսիս-յին-արեւակողմը, զօրանոցի ստորոտը կայ մի փոքրիկ հովասուն պարտեզ բարտի ծառերով հովանաւորուած, որոնց զով ստուերների ներքոյ տեղացիներից հիւրասիրում ենք թէյով, մեր ճանապարհի ցերեկուայ հանգիստը առնելու ժամանակ:

Գիւղաբաղաքի ներքևից անցնում է Նհէլի սկզբնական ճիւղը, որ իր ծագումն առնում է Գէվէտի դաշտի արեւելեան՝ պարսկական սահմանագլխի լեռներից:

Ճաշից յետոյ, կէսօրից մօտաւորապէս երեք ժամ անց, մենք դուրս ենք գալիս Գէվէտից և շարունակում ենք մեր ճանապարհը արտերի և կանաչ մարգագետինների միջով: Նրեկոյեան արեւ մտնելուց յետոյ, հանգստանում ենք Դարա քըրդական փոքր գիւղի մերձակայքում, մի աղբիւրի մօտ, վեցերորդ գիշերը անց կացնելու համար:

Վաղ առաւօտեան արեածագից քիչ առաջ ճանապարհ ենք ընկնում Դարա գիւղից և գնում ենք առաջ Գէվէտի դաշտի հարաւակողմի ճախճախուտի միջով, շատ տեղ ջուրը բարձր

ՄԱ-1369 4490



խոսերի և եղեգնուտի մէջ այնքան է լճացել, որ մեր ձիանները դժուարութեամբ են քայլերը փոխում:

Կարաւանը՝ մեր այդօրուայ ճանապարհի վրայ ապրող քիւրդ ցեղապետի—որի մասին յետոյ—սնոտի երկիւղից զըրդուած, իր հետն էր վերցրել Գէվէնից, այնտեղի զօրքերի հարիւրապետին՝ յիսունը անց ըստ երևոյթին մի բարի թուրք պաշտօնեայ, իր չորս զարթիէներով (ժանդարմ) և մի կրթուած երիտասարդ սպայի, մէկը այն սպաներից, որոնք վերջին տարիներս Վոսփորի գեղածիծաղ ափերից այսպիսի յետ ընկած սահմանավայրներն են քշուում, թէև պաշտօնով, բայց իսկապէս որպէս աքսորական:

Վերջացներով ճահճային ճանապարհը, Գէվէնի ընդարձակ ճանապարհի հետ միասին, մինք մտնում ենք Խումարօի գէլիկը (ձորակ):

Ընթանալով գէղիկի միջով, գետակի աջ ափից, 3—4 ժամից մինք հասնում ենք Խումարօ կոչուած քրդաբնակ գիւղը, որ տարածւում է գետի հանդիպակաց ափին, շինուած բաւականին բարձր բլրակի տափարակ լանջի վրայ, Գիւղի առաջամասում՝ ճիշտ ձորաբերանում, կառուցուած է քարաշէն մի անառիկ ամրոց, որ նայում է ուղղակի գետի վրայ և աչքի առաջ ունի ձորակի ամբողջ տեսարանը:

Ամրոցը՝ որպէս և գիւղը, իր շրջապատով և անտառապատ անմատչելի լեռների բաւականին ընդարձակ սահմանով պատկանում է քիւրդ ցեղապետ Մուսա-բէգին: Մուսա-բէգ, այս անմատչելի սարերի ազատ տէրը, որ տաճիկ կառավարութեան գերիշխանութիւնը հազիւ է ճանաչում, բարձրահասակ, նիհար, ոսկրոտ՝ չոր գէմքով մի մարդ է, բնաւորութեամբ բարի և վեհանձն, ազնիւ գծերով օժտուած, արիասիրտ և անկախութիւն սիրող: Շրջապատուած իր 250—300 հաւատարիմ և անձնուէր քիւրդ ղուլմներով (զինուոր, ծառայ), թառած այդ բարձրաբերձ, անմատչելի, անտառապատ բլուրների կատարներին, նա մինչև այժմ էլ չի խոնարհուել, ոչ մի ուժեղ տիրոջ, ոչ մի այլ հզօր ցեղապետի իշխանութեան առաջ, ապարդիւն թողներով և մեծ ոյժ ունեցող Շէմզգինանի շէյխի՝ Մահմատ Սըղըլիի ջանքն ու հնարամտութիւնները լեռնցի անկախ որդուն հպատակեցնելու համար: Մեր այն տեղից անցնելուց դեռ մի քանի օր առաջ ինչ որ ոչխարի սովորական թալանի խնդրով կռիւ էր պատահել երկու քրդական պետերի—Շէյխի և Մուսա-բէգի—ղուլմների միջև, որը առանց արիւնհեղութիւնների և սպանութեան չէր վերջացել, այնուամենայնիւ կտրիճ Մուսա-բէգը լսելով որ այս անգամ իր ամրոցի

առաջից (միակ ճանապարհն է Շամղդինան տանող) անցնում է հարուստ կարաւանը, բեռնաւորուած իր թշնամու ճոխ ապրանքներով, միայն մի քանի մարդկանց ուղեկցութեամբ՝ ամենևին իր ամրոցից չի շարժուած: Մուսա-բէգը այլ պարագաներում ևս չէ լսուած, որ յարձակուած լինի որևէ իցէ խաղաղ և անջնաս ճանապարհորդների և բեռնաւորուած կարաւանների վրայ՝ կողոպտւած թալանի կամ սպանութեան դիտաւորութիւններով այդպիսով Մուսա-բէգը աչքի ընկնող, բացառիկ մի հակապատկեր է ներկայացնում, բաղդատմամբ Շէրէֆ-բէկի և նրա նման քիւրդ աշիրէթիների և նրանց աւազակ ցեղապետների:

Ընթանալով Մուսա-բէգի ամրոցի ստորոտով, և մի ժամուայ ճանապարհից յետոյ անցնելով Խուժարոյի գետակի հանդիպակաց ափը յորդահոս ջրի մէջտեղով՝ մենք բարձրանում ենք մէկը միւսի ետևից բարձր, խոտաւէտ, և անտառապատ մի քանի բլուրների շարքերը, որոնց սեպ զառիվերի անհարթ թերութեան վրայ մարդս ենթակայ է ամեն մի բռնու, իր ձիու հետ, ներքև՝ անդնդախոր ձորերի մէջ, ցից ժայռերի վրայ գահավիժուելու վտանգին:

Յիշեմ այստեղ որ այդ անտառախիտ բլուրները բովանդակում են անտառային ծառերի համարեա ամեն տեսակները կաղնի, փշատ, դեղի, մոշի, գլեռի, կաղամախի, վայրի խնձորի, տանձի և այլն ծառերից բաղկացած. տեղ-տեղ երևում են վայրենի վարդի թփեր և այլ խիտ մացառներ:

Վերջալոյսից յետոյ հազիւ ենք կարողանում բարձրանալ, Շէմղդինան գաւառի (Գաղայ) կենդրոնավայրը՝ Նէհրի հասնելու համար վերջնութեւր բլուրի գագաթը, որտեղ և մեր եօթներորդ գիշերն ենք անցկացնում կանաչութիւնների մէջ, երկնից վրանի տակ, մի զուլալ աղբիւրակի կողքին, կանաչազարդ գորգի վրայ:

Յաջորդ օրուայ ճանապարհի համար մնացել է մեզ միայն յիշեալ բլրի էջը և մի բարձր, հակայ բլրի ելեւջը: Կատարելով մեր իջևանած բլրի վայրէջքը մեր առջև բացւում է մի սիրուն հովիտ՝ համակ կանաչութիւնով, ցորենի փարթամ արտերով և վայրենի, առատ բուսականութեամբ ծածկուած, որոնք ոռոգւում են անթիւ, իրար խաչաձևող առուակներով: Հովտի մէջ տեղում տարածւում են երկու ասորական սիրուն գիւղեր՝ Բէյթօ և Շապաթան: Այս գիւղերի տնակները շինուած են ամբողջապէս փայտից և անտառային ծառերի տերեւախիտ ճղներից. որպէս առաստաղը նոյնպէս և պատերը փայտից են՝ ծփուած կակուղ մամուռով և ցեխով. տնակների չորս

կողմը, հովտի մէջ, Շէմզդինանի ծխախոտի արտերը. իսկ տնակները մէջ, մէկը միւսի վրայ դարսած, երևում են ծխախոտի խողով, փարթամ, դեղնագոյն տերևների անհամար կապոցներ՝ ահագին կոյտերով: Արտերի ծխախոտը դեռ նոր էր իր թերթիկները բաց արել. միմեանց շատ մօտ, խիտ տնկուած, և ակօսներով միմեանցից բաժանուած: Այստեղ Նէհ-րիից բաժանուած է մի բլուրով միայն՝ հսկայ, անտառախիտ, որի ելևէջը մենք կարողացանք կատարել հազիւ 3—4 ժամում: Հասնելով վերջին բլրի գագաթին մի մեծ չինարի ծառի ստորոտը, որի արմատից հոսում է մի բաւականաչափ յորդահոս աղբիւր, մեր աչքի առաջն է պարզւում Շէմզդինան գաւառի կենդրոնավայր և մեծ Շէյխի աթոռանիստ Նէհրի-ի հրաշալի պատկերը՝ ձգուած բլրի ստորոտում, սիրուն և ընդարձակ մի հովտի մէջ չորս կողմից անտառապատ, անմատչելի բլուրների ընական պատուարով շրջանակուած:

Կ.—ցի

(Վերջը յաջորդում)